Apple-ի Գաղտնիության քաղաքականություն

Apple-ի Գաղտնիության քաղաքականությունը նկարագրում է, թե ինչպես է Apple-ը հավաքում, օգտագործում և կիսում ձեր անձնական տվյալները:

Թարմացվել է 2024 թ. մարտի 31-ին

Ի լրումն այս Գաղտնիության քաղաքականության՝ մենք տրամադրում ենք տվյալներ և գաղտնիության տեղեկություններ, որոնք ներկառուցված են մեր արտադրանքներում, և որոշակի գործառույթներ, որոնք հարցնում են ձեր անձնական տվյալներն օգտագործելիս: Արտադրանքի հատուկ այս տեղեկատվությունը ուղեկցվում է մեր Տվյալների և Գաղտնիության պատկերակով:

Դուք կկարողանաք վերանայել հենց այս արտադրանքի մասին տեղեկությունները նախքան այս գործառույթներն օգտագործելը: Դուք նաև կարող եք ցանկացած ժամանակ դիտել այս տեղեկությունները Կարգավորումներում, որոնք վերաբերում են այդ գործառույթներին և/կամ առցանց՝ apple.com/legal/privacy:

Խնդրում ենք մի պահ տրամադրել՝ ծանոթանալու մեր գաղտնիության գործելակերպին, որը հասանելի է ստորև նշված վերնագրերի միջոցով, և կապվեք մեզ հետ, եթե հարցեր ունեք:

Apple Health Study հավելվածների Գաղտնիության քաղաքականություն

Ի՞նչ են անձնական տվյալները Apple-ում
Ձեր գաղտնիության իրավունքներն Apple-ում
Անձնական տվյալներ, որոնք հավաքում է Apple-ը ձեզանից
Անձնական տվյալներ, որոնք Apple-ը ստանում է այլ աղբյուրներից
Apple-ի կողմից անձնական տվյալների օգտագործումը
Apple-ի կողմից անձնական տվյալների տարածումը
Ձեր անձնական տվյալների պաշտպանությունն Apple-ում
Երեխաներ և անձնական տվյալներ
Քուքիներ և այլ տեխնոլոգիաներ
Անձնական տվյալների փոխանցումը երկրների միջև
Մեր ողջ ընկերության պարտավորագիրը ձեր գաղտնիության հանդեպ
Հարցեր գաղտնիության վերաբերյալ

Ի՞նչ են անձնական տվյալները Apple-ում

Apple-ում մենք իսկապես հավատում ենք գաղտնիության հիմնարար իրավունքներին, և որ այդ հիմնարար իրավունքները չպետք է տարբերվեն կախված այն բանից, թե աշխարհի որ ծայրում եք բնակվում: **Այդ պատճառով մենք ցանկացած տվյալի, որը վերաբերում է նույնականացված կամ նույնականացվող անձի կամ կապված է, կապելի է անձի հետ, Apple-ի կողմից համարվում են որպես «անձնական տվյալներ» անկախ այն բանից, թե որտեղ է բնակվում անձը:** Սա նշանակում է, որ տվյալները, որոնք ուղղակիորեն նույնակացնում են ձեզ, օրինակ՝ ձեր անունը, համարվում են անձնական տվյալներ, ինչպես նաև տվյալները, որոնք ուղղակիորեն չեն նույնականացնում ձեզ, սակայն կարող են խելամտորեն օգտագործվել ձեզ նույնականացնելու համար, օրինակ՝ ձեր սարքի սերիական համարը, համարվում են անձնական տվյալներ: Գաղտնիության քաղաքականության նպատակներով հավաքված տվյալները համարվում են ոչ-անձնական:

Այս Գաղտնիության քաղաքականությունը ներառում է, թե ինչպես է Apple-ը կամ Apple-ի հետ կապված ընկերությունը (համատեղ՝ «Apple») մշակում անձնական տվյալները, անկախ նրանից՝ դուք շփվում եք մեզ հետ մեր կայքերում, Apple հավելվածների միջոցով (օրինակ՝ Apple Music կամ Wallet) կամ անձամբ (ներառյալ հեռախոսով կամ Apple Store այցելելիս): Apple-ը նաև մեր ծառայությունների հետ կապված կարող է կապել երրորդ կողմերին կամ հասանելի դարձնել երրորդ կողմի հավելվածների ներբեռնումը մեր App Store-ից: Apple-ի գաղտնիության քաղաքականությունը չի կիրառվում, թե ինչպես են երրորդ կողմերը սահմանում անձնական տվյալները կամ ինչպես են նրանք այն օգտագործում: Մենք խորհուրդ ենք տալիս ձեզ ընթերցել նրանց գաղտնիության քաղաքականությունները և տեղեկանալ ձեր գաղտնիության իրավունքներին, նախքան նրանց հետ շփումը:

Ձեր գաղտնիության իրավունքներն Apple-ում

Apple-ում մենք հարգում ենք ձեր իմանալու, հասանելիության, ճշգրտման, փոխանցման, մշակման սահմանափակման և ձեր անձնական տվյալների ջնջման կարողությունը: Մենք տրամադրել ենք այս իրավունքները մեր գլոբալ հաճախորդների բազային, և, եթե դուք ընտրում եք կիրառել այս գաղտնիության իրավունքները, դուք իրավունք ունեք չվերաբերվել խտրականորեն կամ ստանալ ավելի քիչ մակարդակի ծառայություն Apple-ից: Երբ ձեզնից պահանջվում է համաձայնություն տալ Apple-ի կողմից ձեր անձնական տվյալների մշակմանը, դուք իրավունք ունեք ցանկացած պահի հետ վերցնել ձեր համաձայնությունը:

Ձեր գաղտնիության իրավունքներն ու ընտրություններն օգտագործելու համար, ներառյալ այն դեպքերը, երբ երրորդ կողմի ծառայություններ մատակարարը գործում է Apple-ի անունից, այցելեք Apple-ի տվյալների և գաղտնիության էջը՝ privacy.apple.com Apple-ի համար, կամ shazam.com/privacy Shazam-ի համար: Ձեր անձնական տվյալները պաշտպանելու համար, դուք պետք է մուտք գործեք ձեր հաշիվ, ինչի հետևանքով ձեր անձը կհաստատվի: Եթե ցանկանում եք ստանալ անձնական տվյալների պատճենը, որը ներկայումս հասանելի չէ privacy.apple.com հղումով, կարող եք հայցել այն այստեղ՝ apple.com/legal/privacy/contact: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնել համապատասխան կարգավորող մարմնին:

Կարող են լինել իրավիճակներ, երբ մենք չենք կարող ձեր հայցը բավարարել, օրինակ՝ եթե դուք խնդրեք մեզ ջնջել ձեր փոխանցումների տվյալները, իսկ Apple-ը իրավաբանորեն պարտավորված է պահել տվյալ փոխանցման գրառումը՝ օրենքին համապատասխանելու համար: Մենք նաև կարող ենք մերժել հայցի բավարարումը, երբ նման կերպ վարվելով մենք վտանգում ենք տվյալների օգտագործման մեր իրավական իրավունքը կապված խարդախության դեմ և անվտանգության նպատակների հետ, օրինակ՝ երբ դուք հայցում եք ջնջել հաշիվ, որը հետազոտվում է անվտանգության խնդիրների պատճառով: Ձեր գաղտնիության խնդրանքը կարող է մերժվել այլ պատճառներով, եթե այն վտանգում է ուրիշների գաղտնիությունը, անլուրջ է կամ նյարդայնացնող կամ չափազանց անիրագործելի կամ անհիմն:

Եթե բնակվում եք Կալիֆոռնիայում և չեք կարողանում մատչել Apple-ի Տվյալների և գաղտնիության էջը, դուք կամ ձեր իրավասու գործակալը կարող է հայց ներկայացնել հետևյալ հղումով՝ apple.com/legal/privacy/contact կամ զանգահարելով՝ 1-800-275-2273:

Ձեր իրավունքների իրականացման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ support.apple.com/102283:

Անձնական տվյալներ, որոնք հավաքում է Apple-ը ձեզանից

Apple-ում մենք հավատում ենք, որ դուք կարող եք ունենալ հիանալի արտադրանքներ և հոյակապ գաղտնիություն: Սա նշանակում է, որ մենք ջանք չենք խնայում, որպեսզի **հավաքենք միայն այն անձնական տվյալները, որոնք մեզ անհրաժեշտ են**: Apple-ի կողմից հավաքվող անձնական տվյալները կախված են նրանից, թե ինչպես եք դուք շփվում Apple-ի հետ: Այն մասին, թե ինչպես է Apple-ը մշակում որոշ ծառայությունների անձնական տվյալները, հասանելի են այստեղ՝ apple.com/legal/privacy/data:

Երբ դուք ստեղծում եք Apple ID, դիմում առևտրային վարկի համար, գնում և/կամ ակտիվացնում եք արտադրանք կամ սարք, ներբեռնում ծրագրաշարի թարմացում, գրանցվում Apple Store-ում որևէ դասընթացի համար, կապվում մեր ծառայություններին, կապվում մեզ հետ, այդ թվում սոցիալական կայքերի միջոցով, մասնակցում որևէ առցանց հարցման կամ որևէ այլ կերպ

հաղորդակցվում Apple-ի հետ, մենք կարող ենք բազմաբնույթ տեղեկություններ հավաքել, այդ թվում՝

- **Հաշվի տվյալներ:** Ձեր Apple ID-ն և հաշվի փոխկապակցված տվյալները, ներառյալ՝ էլ. հասցեն, գրանցված սարքերը, հաշվի կարգավիճակը և տարիքը
- **Սարքի տվյալներ:** Տվյալներ, որոնցով ձեր սարքը կարող է նույնականացվել, օրինակ՝ սարքի սերիական համարը, կամ ձեր սարքի մասին տվյալները, օրինակ՝ դիտարկչի տեսակը
- **Կոնտակտային տվյալներ:** Տվյալներ, ինչպիսիք են, ձեր անունը, էլ. հասցեն, ֆիզիկական հասցեն, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ
- **Վճարային տվյալներ:** Տվյալներ ձեր վճարային հասցեի և վճարման եղանակի մասին, օրինակ՝ բանկային մանրամասներ, վարկային, դեբիտային կամ այլ վճարային քարտի տվյալները
- **Գործարքի տվյալներ:** Apple-ի արտադրանքների գնման և ծառայությունների կամ Apple-ի միջոցով կատարված գործարքների մասին տվյալներ, ներառյալ՝ Apple-ի հարթակներում կատարված գնումները
- **Խարդախության կանխարգելման տվյալներ:** Տվյալներ, որոնք օգնում են բացահայտել և կանխարգելել խարդախությունը, այդ թվում՝ սարքի վստահության գնահատականը
- **Օգտագործման տվյալներ:** Տվյալներ, որոնք վերաբերում են ձեր գործողություններին կապված մեր առաջարկներին և դրանց օգտագործմանը, օրինակ՝ հավելվածների ակտիվացումը մեր ծառայություններում, այդ թվում՝ դիտարկման պատմությունը, որոնման պատմությունը, արտադրանքի կիրառումը, խափանման տվյալները, աշխատանքը և այլ ախտորոշման տվյալներ, և այլ օգտագործման տվյալներ
- **Տեղադրության մասին տեղեկություններ:** Ճշգրիտ տեղորոշում միայն այն ծառայություններին աջակցելու համար, ինչպիսիք են Find My-ը, կամ որտեղ դուք համաձայնում եք տարածաշրջանի հատուկ ծառայություններին և մոտավոր տեղորոշմանը
- **Առողջական տվյալներ:** Տվյալներ, որոնք վերաբերում են անձի առողջական վիճակին, այդ թվում՝ տվյալներ, որոնք կապված են անձի անձնական կամ հոգեկան առողջության կամ վիճակի հետ: Անձնական առողջական տվյալները ներառում են նաև տվյալներ, որոնք կարող են օգտագործվել անձի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություններ անելու կամ հայտնաբերելու համար: Եթե դուք մասնակցում եք հետազոտության՝ օգտագործելով Apple Health Research Study հավելվածը, ձեր անձնական տվյալների գաղտնիությունը կարգավորող քաղաքականությունը նկարագրված է Apple Health Study հավելվածների Գաղտնիության քաղաքականության մեջ:
- **Ֆիթնեսի տվյալներ:** Տվյալներ, որոնք վերաբերում են ձեր ֆիթնեսի և մարզումների տեղեկություններին, որոնք դուք ընտրել եք կիսվել մեզ հետ
- **Ֆինանսական տվյալներ:** Տվյալներ, այդ թվում՝ աշխատավարձի, եկամուտի, գույքի տեղեկությունները, որոնք հավաքվում են, և տեղեկություններ, որոնք վերաբերում են Apple-ի ապրանքանիշային ֆինանսական առաջարկություններին
- **Պետական ID տվյալներ:** Եթե դուք բնակվում եք որոշակի երկրներում, որոշակի հանգամանքներում, այդ թվում նաև՝ անլար հաշիվ տեղակայելիս և ձեր սարքն ակտիվացնելիս, մենք կարող ենք հարցնել նաև պետության կողմից ձեզ տրամադրված ID-ն՝ առևտրային վարկի ժամկետը երկարացնելու, ամրագրումները կառավարելու նպատակներով կամ, եթե պահանջվի օրենքի կողմից
- **Այլ տվյալներ, որոնք դուք տրամադրել եք մեզ:** Apple-ի հետ շփման մանրամասներ, այդ թվում՝ շփումներ հաճախորդների աջակցության հետ և կապ մեզ հետ սոցիալական մամուլի ալիքներով

Դուք պարտավորված չեք մեզ տրամադրել անձնական տվյալները, որոնք մենք ձեզանից խնդրում ենք: Սակայն, եթե որոշում եք չտրամադրել, մեծամասամբ մենք չենք կարող ձեզ տրամադրել մեր արտադրանքները կամ ծառայությունները կամ պատասխանել ձեր խնդրանքներին:

Անձնական տվյալներ, որոնք Apple-ը ստանում է այլ աղբյուրներից

Apple-ը կարող է ստանալ ձեր մասին անձնական տվյալներ այլ **անհատներից**, ձեռնարկություններից կամ գործող երրորդ կողմերից **ձեր նշումով**, մեր **գործընկերներից**, որոնք աշխատում են մեզ հետ՝ տրամադրելու մեր ապրանքներն ու ծառայությունները և աջակցում են մեզ անվտանգության և խարդախության կանխարգելման գործում և այլ օրինական աղբյուրներից:

- **Անհատներ:** Apple-ը կարող է տվյալներ հավաքել ձեր մասին այլ անձանցից, օրինակ՝ եթե այդ անձը ձեզ արտադրանք կամ նվեր-քարտ է ուղարկել, հրավիրել է ձեզ մասնակցել Apple-ի ծառայությանը կամ ֆորումին, կամ ձեզ հետ բովանդակություն է կիսել:
- **Ձեր ուղղորդմամբ:** Դուք կարող եք ուղղորդել այլ անձանց կամ երրորդ կողմերին տվյալներով կիսվել Apple-ի հետ: Օրինակ՝ դուք կարող եք ուղղորդել ձեր բջջային օպերատորին կիսվել տվյալներ ձեր օպերատորի հաշվի մասին Apple-ի հետ՝ հաշվի ակտիվացման համար, կամ ձեր հավատարմության ծրագրի համար ձեր մասնակցության վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համար, որպեսզի կարողանաք պարգևներ վաստակել Apple-ի գնումների համար:
- **Apple-ի գործընկերները:** Մենք նաև կարող ենք հաստատել ձեր տրամադրած տեղեկությունները, օրինակ՝ երբ Apple ID ենք ստեղծում, երրորդ կողմի հետ անվտանգության և խարդախության կանխարգալման նպատակներով:

Հետազոտությունների և զարգացման նպատակներով մենք կարող ենք օգտագործել տվյալների հավաքածուներ, որոնք կարող են պարունակել պատկերներ, ձայներ կամ այլ տեղեկություն, որը կարող է կապակցվել նույնականացվող անձի հետ: Նման տվյալների հավաքածուներ ձեռք բերելիս մենք հետևում ենք կիրառելի օրենքին, ներառյալ այն իրավասության օրենքը, որտեղ պահվում է տվյալների հավաքածուն: Հետազոտությունների և զարգացման նպատակներով նման տվյալների հավաքածուների օգտագործման դեպքում մենք չենք փորձում նույնականացնել անձերին, որոնք կարող են ի հայտ գալ նման դեպքերում:

Apple-ի կողմից անձնական տվյալների օգտագործումը

Apple-ն օգտագործում է անձնական տվյալները մեր ծառայությունները խթանելու, ձեր գործարքները մշակելու, ձեզ հետ հաղորդակցվելու, անվտանգության և խարդախությունների կանխարգելման և օրենքին համապատասխանելու համար: Մենք կարող ենք նաև օգտագործել անձնական տվյալներն այլ նպատակներով՝ ձեր համաձայնությամբ:

Apple-ն օգտագործում է ձեր անձնական տվյալները միայն այն դեպքում, երբ մենք ունենք դրա համար վավեր իրավական հիմք: Կախված հանգամանքից՝ Apple-ը կարող է ապավինել ձեր համաձայնությանը կամ այն փաստին, որ գործընթացն անհրաժեշտ է ձեզ հետ պայմանագիրը կատարելու, ձեր կամ այլ անձանց կենսական շահերը պաշտպանելու կամ օրենքին համապատասխանելու համար: Մենք կարող ենք նաև մշակել ձեր անձնական

տվյալները, որտեղ կարծում ենք, որ դրանք բխում են մեր կամ այլոց օրինական շահերից ՝ հաշվի առնելով ձեր հետաքրքրությունները, իրավունքները և ակնկալիքները: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են մեր արտադրանքի և գործառույթների մեջ ներկառուցված հենց այս արտադրանքի մասին տեղեկություններում, ինչպես նկարագրված է վերևում: Եթե իրավական հիմքի վերաբերյալ հարցեր ունեք, կարող եք կապվել Տվյալների պաշտպանության պատասխանատուի հետ՝ apple.com/legal/privacy/contact:

- **Մեր ծառայությունները խթանելու համար:** Apple-ը հավաքում է անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ են մեր ծառայությունները խթանելու համար, որոնք կարող են ներառել անձնական տվյալներ, որոնք հավաքվել են մեր առաջարկները բարելավելու համար, ներքին նպատակների համար, ինչպիսիք են աուդիտը կամ տվյալների վերլուծությունը կամ խնդիրների շտկման համար: Օրինակ, եթե դուք ուզում եք նվագարկել որևէ երգ Apple Music-ի բաժանորդագրության միջոցով, մենք հավաքում ենք տվյալներ, թե ինչ երգեր եք նվագարկում, որպեսզի ձեզ տրամադրենք պահանջվող բովանդակությունը և հավատարմության նպատակներով:
- **Ձեր գործարքները մշակելու համար:** Գործարքները մշակելու համար Apple-ը պետք է հավաքի տվյալներ, ինչպես օրինակ՝ ձեր անունը, գնումը և վճարման տվյալները:
- **Ձեր հետ հաղորդակցվելու համար:** Հաղորդակցություններին պատասխանելու, ձեր գործարքների կամ հաշվի վերաբերյալ ձեզ հետ կապվելու համար, շուկայահանելու մեր ապրանքներն ու ծառայությունները, տրամադրելու այլ համապատասխան տեղեկություններ կամ խնդրելու տեղեկություններ կամ կարծիք: Ժամանակ առ ժամանակ ձեր անձնական տվյալները կօգտագործվեն կարևոր ծանուցումներ ուղարկելու նպատակով, ինչպես օրինակ՝ գնումների վերաբերյալ նամակները և մեր դրույթներում, պայմաններում ու քաղաքականություններում կատարած փոփոխությունները: Քանի որ այս տեղեկությունները կարևոր են Apple-ի հետ ունեցած շփման դեպքում, հնարավոր է, դուք չեք կարող հրաժարվել այդ կարևոր ծանուցումները ստանալուց:
- **Անվտանգություն և խարդախության կանխարգելում:** Անհատներին, աշխատակիցներին և Apple-ին պաշտպանելու, կորուստները կանխելու և խարդախությունը կանխարգելելու համար, այդ թվում՝ հանուն մեր բոլոր օգտատերերի շահի անհատներին, աշխատակիցներին և Apple-ին պաշտպանելու համար, ինչպես նաև վերբեռնված բովանդակության նախնական ստուգման և սկանավորման ժամանակ՝ անօրինական բովանդակություն, ներառյալ երեխաների սեռական շահագործման նյութեր հայտնաբերելու նպատակով:
- **Անձնական տվյալների օգտագործումը անհատականացման համար:** Եթե որոշեք անհատականացնել ձեր ծառայությունները կամ հաղորդակցությունները, երբ առկա են նման տարբերակներ, Apple-ը կօգտագործի մեր կողմից հավաքած տվյալները, որպեսզի կարողանանք ձեզ առաջարկել այդ անհատականացված ծառայությունները կամ հաղորդակցությունները: Դուք կարող եք իմանալ ավելին, թե ինչպես են համապատասխան ծառայություններն օգտագործում տվյալները՝ անհատականացնելու ձեր փորձը՝ վերանայելով գաղտնիության տեղեկությունները, երբ առաջին անգամ օգտվում եք ծառայությունից, որը խնդրում է օգտագործել ձեր անձնական տվյալները: Մենք հեշտացնում ենք այս տեղեկատվությունը գտնելը՝ այն ներկայացնելով մեր Տվյալների և Գաղտնիության պատկերակով: Այն միշտ հասանելի է նաև ձեր Apple սարքում և առցանց՝ apple.com/legal/privacy/data:
- **Օրենքին համապատասխանելու համար:** Կիրառելի օրեքներին համապատասխանելու համար, օրինակ՝ բավարարելու հարկային կամ հաշվետվության ներկայացման պարտավորությունները, համապատասխանելու պետական օրինական հայցերին:

Apple-ը չի օգտագործում ալգորիթմներ կամ պրոֆիլավորում՝ որևէ որոշում կայացնելու համար, որը կարող է էականորեն ազդել ձեզ վրա՝ առանց անձի կողմից վերանայման հնարավորության: Apple-ը նաև չի օգտագործում կամ բացահայտում զգայուն անձնական տվյալներ ցանկացած նպատակների համար, որոնք կպահանջեն օգտվողից կիրառել իրավունք՝ Կալիֆոռնիայի օրենքի համաձայն մշակումը սահմանափակելու համար:

Apple-ը պահում է անձնական տվյալներն այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է կատարելու այն նպատակները, որոնց համար հավաքվել են տվյալները, ներառյալ՝ սույն Գաղտնիության քաղաքականության մեջ նկարագրված կամ մեր ծառայության հատուկ գաղտնիության ծանուցագրերում կամ օրենքով սահմանված կարգով: Մենք կպահենք ձեր անձնական տվյալները սույն Գաղտնիության քաղաքականության մեջ և մեր ծառայության հատուկ գաղտնիության ծանուցումներում նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածի համար: Պահման ժամկետները գնահատելիս նախ մենք ուշադիր ուսումնասիրում ենք՝ արդյոք անհրաժեշտ է պահել հավաքագրված անձնական տվյալները և, եթե պահպանում է պահանջվում, աշխատում ենք անձնական տվյալները պահել օրենքով թույլատրելի սեղմ ժամկետում:

Apple-ի կողմից անձնական տվյալների տարածումը

Apple-ը կարող է կիսվել անձնական տվյալներով **Apple-ի հետ կապված ընկերությունների, ծառայության մատակարարների հետ,** որոնք գործում են մեր անունից, մեր **գործընկերների, մշակողների, և հրատարակողների հետ**, կամ այլոց հետ՝ **ձեր ուղղորդմամբ**: Բացի այդ, Apple-ը չի կիսում անձնական տվյալները երրորդ անձանց հետ նրանց շուկայավարման նպատակներով:

- **Ծառայություն մատուցողներ.** Apple-ը կարող է ներգրավել երրորդ կողմերին ՝ հանդես գալու որպես մեր ծառայություններ մատակարարող ընկերություն և մեր անունից կատարելու որոշ հանձնարարություններ, ինչպիսիք են տվյալների մշակումը կամ պահպանումը, ներառյալ ՝ անձնական տվյալները, կապված մեր ծառայությունների օգտագործման և հաճախորդներին ապրանքներ առաքելու հետ: Apple-ի ծառայություններ մատակարաները պարտավոր են մշակել անձնական տվյալները՝ համաձայն սույն Գաղտնիության քաղաքականության և մեր հրահանգներին համապատասխան: Նրանք չեն կարող օգտագործել մեր տրամադրած անձնական տվյալները իրենց նպատակների համար և պետք է ջնջեն կամ վերադարձնեն անձնական տվյալները, երբ նրանք կատարեն մեր խնդրանքը:
- **Գործընկերներ.** Ժամանակ առ ժամանակ Apple-ը կարող է համագործակցել երրորդ անձանց հետ՝ ծառայություններ կամ այլ առաջարկներ տրամադրելու համար: Օրինակ, Apple-ի ֆինանսական առաջարկները, ինչպիսիք են Apple Card-ը և Apple Cash-ը, առաջարկվում են Apple-ի և մեր գործընկերների կողմից: Apple-ն իր գործընկերներից պահանջում է պաշտպանել ձեր անձնական տվյալները:
- **Մշակողներ և հրապարակիչներ, որոնցից բաժանորդագրություն եք ստանում:** Եթե դուք գնեք երրորդ կողմի բաժանորդագրություն App Store-ից կամ Apple News-ի շրջանակներում, ապա մենք կստեղծենք Բաժանորդի ID, որը եզակի է ձեր, մշակողի կամ հրապարակողի համար: Բաժանորդի ID-ն կարող է օգտագործվել մշակողին կամ հրապարակողին հաշվետվություններ տրամադրելու համար, ինչը նաև ներառում է տեղեկություններ ձեր ձեռք բերած բաժանորդագրման և ձեր բնակության երկրի վերաբերյալ: Որևէ կոնկրետ մշակողի կամ հրապարակողի բոլոր բաժանորդագրությունները չեղարկելու դեպքում Բաժանորդի ID-ն կվերակայվի 180 օրից, եթե նորից չբաժանորդագրվեք: Այս տեղեկությունները տրամադրվում են մշակողներին կամ հրատարակիչներին, որպեսզի նրանք կարողանան հասկանալ իրենց բաժանորդագրությունների կատարումը:

- **Այլ դրույթներ.** Apple-ը կարող է տրամադրել ձեր անձնական տվյալներն այլ կողմերին ձեր ուղղորդմամբ կամ ձեր համաձայնությամբ, օրինակ՝ երբ ձեր օպերատորին ենք տրամադրում տվյալներ հաշիվն ակտիվացնելու համար: Մենք կարող ենք նաև բացահայտել ձեզ առնչվող տեղեկությունները, եթե գտնենք, որ ազգային անվտանգության, օրենքի կիրառման նպատակների կամ հանրային նշանակության այլ հարցերի նպատակներով բացահայտումն անհրաժեշտ կամ տեղին է: Մենք կարող ենք նաև բացահայտել տեղեկություններ ձեր մասին, երբ կան իրավական հիմքեր այդ անելու համար, եթե մենք որոշենք, որ բացահայտումը ողջամտորեն անհրաժեշտ է՝ մեր պայմաններն ու դրույթները կիրառելու, մեր գործողությունները կամ օգտագործողներին պաշտպանելու կամ վերակազմավորվելու, միավորման կամ վաճառքի դեպքում:

Apple-ը չի վաճառում ձեր անձնական տվյալները, այդ թվում՝ այն «վաճառքը», որը սահմանված է Նևադայում և Կալիֆոռնիայում: Apple-ը նաև չի «կիսում» ձեր անձնական տվյալները, ինչպես այդ տերմինը սահմանված է Կալիֆոռնիայում:

Ձեր անձնական տվյալների պաշտպանությունն Apple-ում

Apple-ում մենք հավատում ենք, որ հիանալի գաղտնիության հիմքում հիանալի անվտանգությունն է: Մենք օգտագործում ենք վարչարարական, տեխնիկական և ֆիզիկական երաշխիքներ պաշտպանելու ձեր անձնական տվյալները՝ հաշվի առնելով անձնական տվյալների բնույթը և մշակումը և առաջացող վտանգները: Մենք անդադար աշխատում ենք բարելավել այս երաշխիքները՝ ձեր անձնական տվյալներն անվտանգ պահելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք մեր Apple-ի հարթակի անվտանգության ուղեցույցը:

Երեխաներ և անձնական տվյալներ

Apple-ը հասկանում է երեխաների անձնական տվյալների պաշտպանության կարևորությունը, որոնց մենք համարում ենք **13 տարեկանից ցածր անհատ կամ համարժեք տարիք, ինչպես սահմանված է ձեր իրավասության օրենքով:** Այդ իսկ պատճառով Apple-ը հավելյալ գործընթացներ և պաշտպանություն է կիրառել՝ երեխաների անձնական տվյալները պաշտպանելու համար:

Apple-ի որոշակի ծառայություններ մուտք գործելու համար երեխան պետք է ունենա երեխայի Apple ID: Երեխայի Apple ID-ն կարող է ստեղծվել **ծնողի կողմից** կամ Կառավարվող Apple ID-ի դեպքում՝ **երեխայի ուսումնական հաստատության կողմից**:

- **Ծնողներ:** Երեխայի հաշիվ ստեղծելու համար ծնողները պետք է վերանայեն Ընտանեկան գաղտնիության բացահայտում երեխաների համար բաժինը, որը նկարագրում է, թե ինչպես է Apple-ը մշակում երեխաների անձնական տվյալները: Եթե նրանք համաձայն են, ծնողը պետք է Apple-ին տրամադրի ծնողի կողմից հաստատված համաձայնություն:

- **Կրթական հաստատություններ:** Apple School Manager ծրագրին մասնակցող կրթական հաստատությունները կարող են նաև աշակերտների համար ստեղծել Apple ID-ներ, որոնք կոչվում են «Կառավարվող Apple ID-ներ»: Այս դպրոցներից պահանջվում է համաձայնել Կառավարվող Apple ID-ներ ուսանողների բացահայտման համար դրույթին, որը ներառված է Apple School Manager-ի համաձայնագրում որպես Ցուցադրանք Ա:

Եթե իմանանք, որ երեխայի անձնական տվյալները հավաքվել են առանց համապատասխան թույլտվության, դրանք հնարավորինս շուտ կջնջվեն:

Ձեր երեխայի տեղեկատվության գաղտնիության իրավունքներն օգտագործելու համար այցելեք Apple Data and Privacy էջը՝ privacy.apple.com , և մուտք գործեք նրանց հաշիվ:

Քուքիներ և այլ տեխնոլոգիաներ

Apple-ի կայքերը, առցանց ծառայությունները, ինտերակտիվ հավելվածները և գովազդները կարող են օգտագործել «քուքիներ» և այլ տեխնոլոգիաներ, ինչպիսիք են վեբ փարոսները: **Այս տեխնոլոգիաները մեզ օգնում են ավելի լավ հասկանալ օգտվողի վարքագիծը, ներառյալ՝ անվտանգության և խարդախության կանխարգելման նպատակներով, տեղեկացնում են մեզ, թե մեր վեբկայքերի որ մասն են մարդիկ այցելում, և բարձրացնում ու չափում են գովազդերի ու համացանցային որոնումների արդյունավետությունը:**

- **Հաղորդակցման քուքիներ:** Այս քուքիներն օգտագործվում են Apple-ի համակարգեր ցանցային թրաֆիկը թույլ տալու համար, այդ թվում՝ օգնելով մեզ հայտնաբերել ցանկացած սխալ:
- **Չափանզանց անհրաժեշտ քուքիներ:** Այս քուքիները տաղակայվում են ըստ անհրաժեշտության՝ ապահովելու որոշակի գործառույթ կամ ծառայություն, որտեղ դուք մուտք եք գործել կամ հայցել եք: Օրինակ, նրանք թույլ են տալիս մեզ ցուցադրել մեր կայքերը պատշաճ ձևաչափով և լեզվով, նույնականացնել և հաստատել ձեր գործարքները, ինչպես նաև պահպանել ձեր Զամբյուղի պարունակությունը՝ առցանց գնումներ կատարելիս՝ apple.com:
- **Այլ քուքիներ:** Այս քուքիներն օգտագործվում են հասկանալու, թե ինչպես են այցելուները շփվում մեր կայքերի և առցանց ծառայությունների հետ, այդ թվում՝ օգնելով մեզ գնահատել գովազդների և վեբ որոնումների արդյունավետությունը: Apple-ը նաև օգտագործում է այս քուքիները՝ հիշելու այն ընտրությունները, որոնք կատարում եք դիտարկելիս, որպեսզի կարողանանք ձեզ տրամադրել անհատականացված փորձառություն:

Եթե նախընտրում եք, որ Apple-ը չօգտագործի քուքիներ, մենք ձեզ միջոցներ ենք տրամադրում դրանց օգտագործումն անջատելու համար: Եթե ցանկանում եք կասեցնել քուքիները և, եթե օգտագործում եք Safari վեբ դիտարկիչ, ապա Safari-ի գաղտնիության կարգավորումներում ընտրեք «Արգելափակել բոլոր քուքիները»: Եթե օգտագործում եք այլ դիտարկիչներ, ստուգեք ձեր մատակարարի հետ, թե ինչպես անջատել քուքիները: Apple-ի կայքի որոշակի գործառույթներ կարող են մատչելի չլինել, եթե բոլոր քուքիներն անջատվեն:

Քուքիներից բացի, Apple-ն օգտագործում է այլ տեխնոլոգիաներ, որոնք օգնում են մեզ հասնել նմանատիպ նպատակների:

Apple-ի կողմից ուղարկված որոշ էլեկտրոնային հաղորդագրություններում մենք տրամադրում ենք «անցեք URL-ի միջոցով» հատկությունը, որը հղված է Apple-ի կայքի բովանդակությանը: Երբ դուք սեղմում եք այս URL-ներից մեկը, դրանք անցնում են առանձին սպասարկչի միջով՝ նախքան մեր կայքում գտնվող նպատակային էջ հասնելը: Մենք հետագծում ենք այս սեղմումով անցումները, որոնք օգնում են մեզ հասկանալ ձեր հետաքրքրությունը որոշակի թեմաներով և չափել՝ արդյոք մենք արդյունավետ կերպով ենք հաղորդակցվում ձեզ հետ: Եթե չեք ցանկանում, որ ձեր գործողությունները հետագծվեն այս ձևով, դուք չպետք է սեղմեք էլեկտրոնային հաղորդագրություններում պարունակվող գրաֆիկական կամ տեքստային հղումները:

Apple-ը սովորաբար այս քուքիների և նմանատիպ տեխնոլոգիաների միջոցով հավաքված տվյալներին վերաբերվում է որպես ոչ անձնական տվյալներ: Այնուամենայնիվ, այնքանով, որքանով տեղական օրենսդրությունը Համացանցի հաղորդակարգի (IP) հասցեները կամ նման նույնացուցիչները համարում են անձնական տվյալներ, մենք այդ նույնացուցիչներին վերաբերվում ենք նաև որպես անձնական տվյալներ այդ տարածաշրջանների համար: Բացի այդ, Apple-ը երբեմն համատեղում է այս տեխնոլոգիաներից հավաքված ոչ անձնական տվյալները Apple-ի կողմից պահած այլ անձնական տվյալների հետ: Երբ այս եղանակով տվյալները համատեղում ենք, սույն Գաղտնիության քաղաքականության նպատակներով մենք վերաբերվում ենք համակցված տվյալներին որպես անձնական տվյալների:

Գովազդները, որոնք տրամադրվում են Apple-ի գովազդային հարթակի կողմից, կարող են հայտնվել App Store-ում, Apple News-ում, Stocks-ում և Apple TV-ում՝ կախված ձեր գտնվելու վայրից: Apple-ի գովազդային հարթակը չի հետևում ձեզ, ինչը նշանակում է, որ այն չի կապում մեր հավելվածներից հավաքված օգտատերերի կամ սարքի տվյալները երրորդ կողմերից հավաքագրված օգտատերերի կամ սարքի տվյալների հետ՝ նպատակային գովազդի կամ գովազդի չափման նպատակով, և չի կիսում օգտատերերի կամ սարքի տվյալները տվյալների բրոքերների հետ:

Եթե չեք ուզում այդ հավելվածներում Apple-ի գովազդային հարթակից ստանալ ձեր հետաքրքրությունների վրա հիմնված գովազդներ, կարող եք անջատել «Անհատականացված գովազդներ» գործառույթը, որը կանջատի նման գովազդների ստացումը ձեր Apple ID-ի վրա՝ անկախ նրանից, թե ինչ սարքից եք օգտվում: Ձեր iOS, iPadOS կամ visionOS սարքում կարող եք անջատել Անհատականացված գովազդը՝ անցնելով Կարգավորումներ > Գաղտնիություն և անվտանգություն > Apple գովազդ և սեղմելով՝ Անհատականացված գովազդն անջատելու համար: Ձեր Mac սարքում կարող եք անջատել «Անհատականացված գովազդներ» գործառույթը՝ անցնելով Համակարգի կարգավորումներ > Գաղտնիություն և անվտանգություն > Apple գովազդ, ապա ապընտրել «Անհատականացված գովազդներ» գործառույթը: Դուք դեռ կարող եք App Store-ում, Apple News-ում կամ Stocks-ում գովազդներ տեսնել՝ հիմնված համատեքստի վրա, ինչպիսին է ձեր որոնման հարցումը կամ ձեր կարդացած ալիքը: Եթե անջատեք «Թույլատրել հավելվածներին հայցել հետևում», ապա երրորդ կողմի հավելվածները չեն կարող պահանջել օգտագործել Գովազդային նույնացուցիչը, որը ձեր սարքի օպերացիոն համակարգի կողմից սպասարկվող ոչ անձնական նույնացուցիչն է՝ հետևելու ձեզ այլ ընկերություններին պատկանող հավելվածներում և կայքերում:

Apple-ի կողմից տրամադրվող գովազդի և գաղտնիության մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ apple.com/legal/privacy/data/en/apple-advertising:

Անձնական տվյալների փոխանցումը երկրների միջև

Apple-ի արտադրանքներն ու առաջարկները ձեզ կապում են աշխարհի հետ: Սա հնարավոր դարձնելու համար, **ձեր անձնական տվյալները կարող են փոխանցվել կամ հասանելի լինել կազմակերպություններին ամբողջ աշխարհում**, ներառյալ Apple-ի հետ փոխկապակցված ընկերությունները՝ իրականացնելու վերամշակման գործողություններ, ինչպիսիք են սույն Գաղտնիության քաղաքականության մեջ նկարագրվածները՝ կապված ձեր կողմից մեր արտադրանքի և ծառայությունների օգտագործման հետ: Apple-ը հետևում է երկրների միջև անձնական տվյալների գործարքի մասին օրենքներին՝ օգնելու ապահովել ձեր տվյալների պաշտպանությունը ցանկացած վայրում:

Apple-ի հաստատությունը, որը վերահսկում է ձեր անձնական տվյալները, կարող է տարբեր լինել՝ կախված ձեր բնակության վայրից: Օրինակ, Apple Store-ի տեղեկատվությունը

վերահսկվում է յուրաքանչյուր երկրի մանրածախ առևտրի առանձին կազմակերպությունների կողմից, և Apple Media Services-ի հետ կապված անձնական տվյալները կարող են վերահսկվել Apple-ի տարբեր կազմակերպությունների կողմից, ինչպես արտացոլված է ծառայության պայմաններում: Եթե դուք չեք բնակվում ԱՄՆ-ում, ձեր անձնական տվյալները կարող են մշակվել Apple Inc.-ի և Apple-ի հետ փոխկապակցված ընկերությունների կողմից՝ ձեր իրավասու շրջանի համար անձնական տվյալները վերահսկող Apple-ի հաստատության կողմից: Օրինակ՝ Apple-ի կողմից ամբողջ աշխարհով մեկ հավաքվող պատկերային և փոխկապակցված տվյալները, որոնց նպատակն է բարելավել Apple Քարտեզները և աջակցել մեր Look Around գործառույթին, փոխանցվում են Apple Inc.-ին Կալիֆոռնիայում:

Եվրոպական տնտեսական տարածքում, Միացյալ Թագավորությունում և Շվեյցարիայում գտնվող անհատներին վերաբերող անձնական տվյալները վերահսկվում են Իռլանդիայում գտնվող Apple Distribution International Limited-ի կողմից: Apple-ի կողմից Եվրոպական տնտեսական տարածքում, Միացյալ Թագավորությունում և Շվեյցարիայում հավաքագրված անձնական տվյալների միջազգային փոխանցումը կարգավորվում է Ստանդարտ պայմանագրային դրույթներով: Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք Apple-ի Ստանդարտ պայմանագրային դրույթների պատճենը, կարող եք կապվել մեզ հետ՝ apple.com/legal/privacy/contact:

Անձնական տվյալները, որոնք հավաքվում են Apple-ի կամ Apple-ի հետ փոխկապակցված ընկերության կողմից ամբողջ աշխարհում, ընդհանուր առմամբ, պահվում է Apple Inc.-ի կողմից Միացյալ Նահանգներում: Անկախ այն բանից, թե որտեղ են պահվում ձեր անձնական տվյալները, Apple-ը պահպանում է պաշտպանության և պաշտպանական միջոցների նույն բարձր մակարդակը: Apple-ի անձնական տվյալների միջազգային փոխանցումը, որը հավաքագրվել է Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության (APEC) մասնակից երկրներում, հետևում է APEC Անդրսահմանային գաղտնիության կանոնների (CBPR) համակարգին և Պրոցեսորների գաղտնիության ճանաչում (PRP) համակարգին՝ անձնական տվյալների փոխանցման համար: Սույն Գաղտնիության քաղաքականության ամսաթվի դրությամբ APEC CBPR համակարգերին մասնակցող երկրներն են՝ Միացյալ Նահանգները, Ավստրալիան, Կանադան, Չինական Թայբեյը, Ճապոնիան, Մեքսիկան, Ֆիլիպինները, Կորեայի Հանրապետությունը և Սինգապուրը: Եթե ունեք հարցեր կամ չլուծված մտահոգություններ APEC CBPR կամ PRP հավաստագրերի վերաբերյալ, կապվեք մեր երրորդ կողմի վեճերի լուծման մատակարարի հետ:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ֆիզիկական անձանց վերաբերյալ անձնական տվյալները կարող են մշակվել Apple-ի կողմից Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմաններից դուրս գտնվող երկրներում, ինչպիսիք են Apple Inc.-ը Միացյալ Նահանգներում կամ Apple Distribution International Limited-ը Իռլանդիայի Հանրապետությունում: Նման դեպքում դա կարվի տեղական օրենքներին համապատասխան՝ ներառյալ Անձնական տվյալների պաշտպանության օրենքը: Սույն Գաղտնիության քաղաքականության մեջ սահմանված մշակման նպատակների համար Apple-ը կարող է նաև փոխանցել նման անձնական տվյալները երրորդ կողմի ծառայությունների մատակարարներին, որոնք իրենց հերթին կարող են պահել կամ փոխանցել տվյալները Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմաններից դուրս: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Չինաստանի մայրցամաքային գաղտնիության բացահայտումներ:

Մեր ողջ ընկերության պարտավորագիրը ձեր գաղտնիության հանդեպ

Ձեր անձնական տվյալների ապահովությունը երաշխավորելու համար, մենք փոխանցում ենք մեր գաղտնիության և ապահովության ուղեցույցները Apple-ի աշխատակիցներին և խստորեն պարտադրում գաղտնիության պահպանումը ընկերության շրջանակներում:

Հարցեր գաղտնիության վերաբերյալ

Եթե հարցեր ունեք Apple-ի Գաղտնիության քաղաքականության կամ գաղտնիության գործելակերպի վերաբերյալ, ներառյալ այն դեպքերը, երբ երրորդ կողմի ծառայությունների մատակարարը գործում է մեր անունից, կամ ցանկանում եք կապվել մեր տվյալների պաշտպանության պատասխանատուի հետ, կարող եք կապվել մեզ հետ՝ apple.com/legal/privacy/contact կամ զանգահարել Apple-ի աջակցման կենտրոն ձեր երկրի կամ տարածաշրջանի համար: Կարող եք նաև մեզ հարցնել, թե ինչպես գաղտնիությանն առնչվող բողոք ներկայացնել, և մենք կփորձենք օգնել ձեզ:

Apple-ի համար ձեր գաղտնիության վերաբերյալ հարցերը շատ կարևոր են: Հատուկ թիմը վերանայում է ձեր հարցումը ՝ որոշելու, թե ինչպես լավագույնս արձագանքի ձեր հարցին կամ մտահոգությանը, ներառյալ՝ հասանելիության կամ ներբեռնման հարցումներին ի պատասխան ստացված հայտերը: Մեծամասամբ, բոլոր բովանդակային շփումները պատասխան են ստանում յոթ օրվա ընթացքում: Այլ դեպքերում, մենք կարող ենք պահանջել լրացուցիչ տեղեկություններ կամ տեղեկացնել ձեզ, որ մեզ ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ պատասխանելու համար:

Եթե ձեր բողոք ներկայացնող անձը նշում է, որ գաղտնիության խնդիրների պահպանումը կարող է բարելավվել, մենք քայլեր կձեռնարկենք նման թարմացումները կատարելու համար հաջորդ ողջամիտ հնարավորության դեպքում: Եթե գաղտնիության խնդիրը ձեր կամ որևէ այլ անձի համար բացասական ազդեցություն է ունեցել, մենք քայլեր կձեռնարկենք ձեր կամ այդ երրորդ անձի հետ խնդիրը լուծելու համար:

Ցանկացած ժամանակ կարող եք ձեր բողոքը փոխանցել համապատասխան կարգավորող մարմնին, ներառյալ նաև, եթե գոհ չեք Apple-ի պատասխանից: Եթե ցանկանում եք ստանալ սպառիչ տեղեկություններ բողոք ներկայացնելու եղանակների մասին, որոնք հնարավոր են տվյալ հանգամանքներում, ապա դիմեք մեզ և մենք կաշխատենք տրամադրել ձեզ համապատասխան տեղեկատվությունը:

Եթե այս Գաղտնիության քաղաքականության մեջ էական փոփոխություն տեղի ունենա, մենք դա անելու համար առնվազն մեկ շաբաթ առաջ ծանուցում կտեղադրենք այս կայքում և ուղղակիորեն կկապվենք ձեզ փոփոխության վերաբերյալ, եթե ձեր տվյալները լինեն մեզ մոտ:

Դիտեք մեր APEC CBPR հավաստագիրը >

Դիտեք մեր APEC PRP հավաստագիրը >